ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԱՍԱԿԻ ՀԵՆԱԿԵՏԸ ԳՐԱՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿ

Գրոհային խմբերի մարտական գործողությունների մարտավարությունը պետք է ներառի անցյալ պատերազմների և ժամանակակից հակամարտությունների իրողությունների ու փորձի ուսումնասիրությունը: Միևնույն ժամանակ նշենք, որ անօդաչու օդային և ցամաքային համակարգերի սրընթաց զարգացումը և դրանց զանգվածային գործարկումը մարտի դաշտում ստիպում են անընդհատ վերանայել ստորաբաժանումների մարտավարությունը՝ նոսրացնելով մարտակարգի խտությունը:

- Գրոհային խումբը (1, 5) հրետանու և ականանետերի կրակի պաշտպանության ներքո առաջ շարժվելով դեպի գրոհին ենթակա օբյեկտ, զբաղեցնում է ելման շրջան հենակետի թևերում:

- Ճակատի երկայնքով գործողությունների համար գրոհային խումբը (2, 3) զբաղեցնում է յուրային զորքերի ստորաբաժանումների դիրքերը, կրակով կաշկանդում հակառակորդին և ապահովում գրոհային խմբերի մուտքը թևերից:

- (4) Գրոհային խումբը գտնվում է ռեզերվում, պատրաստ լինելով թևերից մեկում ջանքերի ընդլայնման:

- Մինչև կրակային հարձակումը կրակային աջակցության ջոկերը առաջ են քաշվում դեպի հակառակորդի դասակի հենակետի 1-ին շարակարգ և զբաղեցնում են նախօրոք նշված կրակային դիրքերը:

- Գնդացրային և նռնականետային հաշվարկները իրականացնում են հակառակորդի դիտարկում՝ պատրաստ լինելով ինքնուրույն կամ հրահանգով ճնշել հակառակորդի կրակային միջոցները:

- ՀՏԿՀ-ի հաշվարկները հակառակորդի տեխնիկան խոցելու համար առավել մատչելի ուղղություններում սարքավորում են երկու-երեք դիրք՝ պատրաստ լինելով կրակ վարել ինչպես ինքնուրույն, այնպես էլ հրամանով:

- Դիպուկահար զույգերը կրակային դիրքեր զբաղեցնում են այնպես, որ հնարավորինս քողարկված լինեն և կատարվող առաջադրանքով կրակ վարեն ամբողջ ճակատով:

- ԱԹՍ-ների օպերատորները գտնվում են հրամանատարների կողքին, օդային հետախուզություն են իրականացնում հակառակորդի առաջնային եզրով և պաշտ-պանության խորությամբ, բացահայտում են հակառակորդի կրակային միջոցները, ճշգրտում են կրակը և հաղորդում կրակային խոցման արդյունքները:

- Հրաձիգ սակրավորները գնդացիրների պաշտպանության ներքո անցուղիներ են բացում դեպի կենտրոն:

- Գրավման ջոկերը սկսում են շարժվել հրետակոծությունն սկսվելուն պես, որը իրականացում է ՄՀվ (ՏՎ)-ի մարտակարգի գրավման և պաշտպանության ենթախմբերը՝ կենտրոնացվահած կրակով:

- Բոլոր կրակային միջոցների կրակային պաշտպանության ենթախումբը իրականացնում է գրավման ենթախմբի կրակային պաշտպանություն:

- Գրավման ենթախումբը, օգտագործելով հակառակորդի կրակային խոցման արդյունքները, նեխուժում է դիրքեր և ոչնչացնում է հակառակորդին խրամ-ուղիներում և հաղորդակցության անցատեղիներում:



Որտեղ՝ ԳՎ – գրոհային վաշտ, ԳԽ- գրոհային խումբ, ՄՀդ – Մոտոհետևակային դասակ

Աղբյուրը: Unfair Advantage